**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**

**Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն   Բ Ա Ն Կ Ի   Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ԿՈԴ**
**050.0170 Ա. 29.09.2025**

**29 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 170 Ա**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ  է.**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական բանկի նախագահի*
*տեղակալ՝* *Հովհաննես Խաչատրյան*
*Երևան*

**Հաստատված է**

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի սեպտեմբերի 29-ի
թիվ 170 Ա որոշմամբ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ**[1]

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կատարման գործընթացը[2]

2025 թվականին համաշխարհային տնտեսությունում և Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի դանդաղման ռիսկերը պահպանվել են՝ կրելով աշխարհաքաղաքական անորոշությունների և առևտրատնտեսական լարվածությունների շարունակական ազդեցությունը: Միևնույն ժամանակ, համաշխարհային տնտեսական նշված զարգացումներն ուղեկցվել են համաշխարհային գնաճի բարձր մակարդակում պահպանման ռիսկերով:

Հայաստանում տնտեսական ակտիվությունն արագացել է՝ հատկապես տարվա երկրորդ եռամսյակից սկսած, որին շարունակել է զգալիորեն նպաստել շինարարության և ծառայությունների ճյուղերի բարձր աճը, իսկ արդյունաբերությունը որոշակի մեկանգամյա գործոններով պայմանավորված նվազումից հետո սկսել է դանդաղ վերականգնվել: Ընդ որում, տնտեսական աճը շարունակել է կենտրոնացված լինել հիմնականում պահանջարկի ավելացմամբ պայմանավորված ճյուղերում, որի աճը գերազանցել է որոշ կարճաժամկետ, ոչ կառուցվածքային աճի գործոնների աստիճանական չեզոքացման ազդեցությունը: Արդյունքում՝ տարվա առաջին ութ ամիսների տնտեսական ակտիվությունը կազմել է 7.1 տոկոս՝ դրական ազդակներ փոխանցելով տարեկան տնտեսական աճի կատարողականի մասով: Արդյունքում, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականների, ակնկալվում է, որ կարճաժամկետ, ոչ կառուցվածքային աճի գործոնների աստիճանական չեզոքացման պայմաններում ՀՀ տնտեսական աճը, որոշակի ճշգրտվելով, տարվա արդյունքում կկազմի 5.2 տոկոս՝ ապահովելով պետական բյուջեի ծրագրում նախանշված ցուցանիշը:

Հարկ է նշել, որ ձևավորված բարձր տնտեսական ակտիվությունը՝ վերոնշյալ կառուցվածքային առանձնահատկությունների պայմաններում, **դեռևս**

---

[1] ՀՀ կենտրոնական բանկը պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացության կազմման աշխատանքներում առաջնորդվում է բյուջեի ծրագրի՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովման, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածության և դիրքի, երկարաժամկետ աճին նպաստելու և այլ սկզբունքների ներքո գնահատականների ներկայացմամբ:

[2] Սույն փաստաթղթում ներկայացված թվային տվյալները և գնահատականները վերցված են «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծից:

**անորոշություններ է պարունակում տնտեսական աճի կայունության, երկարաժամկետ հեռանկարի, ինչպես նաև ներքին պահանջարկի հետագա միտումների վերաբերյալ:**

2025 թվականի սկզբից 12-ամսյա գնաճը ցուցաբերել է արագացման միտումներ, որին նպաստել են սեզոնային պարենային ապրանքների գնաճը, ինչպես նաև վերջին ամիսներին համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումները՝ հատկապես ներմուծվող պարենային ապրանքների մասով: Նշենք նաև, որ տարեսկզբից նկատվել է ծառայությունների գնաճի որոշակի արագացում, մինչդեռ կոշտ գներով բնութագրվող ոչ արտահանելի ապրանքների գնաճը, որը հիմնականում բնութագրում է պահանջարկի զարգացումներով պայմանավորված գների վարքագիծը, շարունակել է ձևավորվել 2.0-2.5% միջակայքում: Հատկանշական է նաև, որ տարվա ընթացքում գնաճային սպասումները ևս աստիճանաբար կայունացել են 3% թիրախային մակարդակի շուրջ:

Առաջնորդվելով գների կայունության նպատակի ապահովման սկզբունքով և հաշվի առնելով առկա ռիսկերն ու անորոշությունները՝ **ՀՀ կենտրոնական բանկը տարվա սկզբում՝ փետրվարին, 0.25 տոկոսային կետով նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ սահմանելով 6.75 տոկոս, իսկ այնուհետև՝ թողել անփոփոխ: Ընդ որում, 2023 թվականի հունիսից մինչև 2025 թվականի հուլիս Կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցրել է 3.5 տոկոսային կետով:** Այս համատեքստում, ՀՀ կենտրոնական բանկը մշտադիտարկում է մի շարք սցենարներ, այդ թվում, մի կողմից՝ աշխարհաքաղաքական, հարկաբյուջետային քաղաքականությունների և ներքին տնտեսությունում ավելցուկային պահանջարկի ձևավորման ռիսկերի մասով, իսկ մյուս կողմից՝ արտաքին պահանջարկի ճշգրտմամբ պայմանավորված տնտեսության որոշ հատվածների անհավասարաչափ թուլացման, անշարժ գույքի գների աստիճանական ճշգրտման և համաշխարհային տնտեսության դանդաղման հեռանկարի վերաբերյալ ռիսկերի մասով: Նշված սցենարների ներքո ՀՀ կենտրոնական բանկը պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 3% նպատակի և գների կայունության ապահովման համար:

Սպասվածից բարձր տնտեսական աճը նպաստել է նաև հարկերի հավաքագրման բարելավմանը: Այսպես՝ **2025 թվականի առաջին ութ ամիսներին արձանագրվել է ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճի տեմպի արագացում,** որը բացի տնտեսական բարձր աճից, պայմանավորված էր նաև հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմամբ, տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ շինարարության ոլորտում) հարկման ժամանակային առանձնահատկություններով, ինչպես նաև օրենսդրության փոփոխություններով և հարկման բազաների աճով: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը տարվա ութ ամիսների արդյունքում գերազանցել է տարվա համար նախատեսված աճի ցուցանիշը և կազմել 14.3 տոկոս: Արդյունքում, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանման պայմաններում, սպասվում է, որ 2025 թվականին հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կաճի 1.0 տոկոսային կետով՝ ձևավորվելով 2025 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից փոքր-ինչ ցածր մակարդակում: Այսպիսով՝

*գնահատվում է, որ* ***2025 թվականին համախառն պահանջարկի վրա հարկերը կունենան զսպող ազդեցություն:***

Առաջնորդվելով տնտեսական ներուժի աճին ուղղված ծախսերի իրականացման նպատակադրմամբ՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարման գործընթացում կարևորվել է տնտեսական աճին նպաստելու, տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման, կապիտալ ծախսերի, ինչպես նաև սոցիալական աջակցությամբ պայմանավորված ծախսային միջոցառումների իրականացումը: Նշվածն արտացոլվել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի՝ տարվա ութ ամիսների արդյունքում բարձր՝ 12.9 տոկոս աճի ցուցանիշներում, որտեղ ընթացիկ ծախսերն աճել են 7.7 տոկոսով, իսկ կապիտալ ծախսերը՝ 39.3 տոկոսով: Նշենք նաև, որ ընթացիկ ծախսերի աճը պայմանավորված էր հիմնականում մեծ կշիռ ունեցող սոցիալական նպաստների ու կենսաթոշակների աճով: Սպասվում է, որ 2025 թվականի պետական բյուջեի ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան շուրջ 2.2 տոկոսային կետով, որտեղ ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան 0.9 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերը՝ 1.3 տոկոսային կետով:

Այսպիսով՝ ծախսային քաղաքականությունը տնտեսական ներուժի և ընթացիկ տարվա տնտեսական աճին նպաստելու տեսանկյունից համահունչ է մնացել թիրախավորված ուղղությանը և կապիտալ ծախսերի գծով արձանագրել է աճի բարձր ցուցանիշ: Այս պարագայում, **տնտեսության միջնաժամկետ ներուժի տեսանկյունից կարևորվում է տնտեսական ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված կապիտալ ծախսերի թիրախային մակարդակի և արդյունավետության հետևողական ապահովումը:**

Արդյունքում՝ ***2025 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա կունենան չեզոքին մոտ՝ փոքր ընդլայնող ազդեցություն:***

Այսպիսով՝ ծախսերի համեմատ եկամուտների ավելի բարձր աճի, ինչպես նաև տնտեսական ակտիվության տեմպի արագացման պայմաններում 2025 թվականի հունվար-օգոստոսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը զգալիորեն զիջել է ծրագրված մակարդակին, ինչպես նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորված պակասուրդին: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ **պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա նկատմամբ կավելանա 1.8 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 5.5%-ը,** որի պարագայում ենթադրվում է, որ պակասուրդի նախանշված մակարդակի ապահովման ներքո ծախսերի իրականացման բեռը կընկնի տարվա վերջին մի քանի ամիսների վրա: Արդյունքում, հաշվի առնելով տնտեսական աճի կայունացումը ներուժային մակարդակի շուրջ, ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի աճի կառուցվածքը, 2025 թվականի ***հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա կլինի չեզոքին մոտ***: Հարկ է նշել, որ **հաշվի առնելով բյուջեի եկամուտների հավաքագրման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև ծախսերի կատարման ոլորտում հնարավոր ռիսկերը, հարկաբյուջետային քաղաքականությունը կարճաժամկետ հատվածում կարող է առավել խթանող ազդեցություն ունենալ՝ նպաստելով ներքին սպառման ու պահանջարկի ավելացմանը:**

Տնտեսական աճի ներուժային մակարդակի շուրջ կայունացման և դրան համահունչ՝ տնտեսությունում ամբողջական պահանջարկի վրա ազդեցություն ունեցող ծախսերի կայուն մակարդակի պահպանման արդյունքում, 2025 թվականին ակնկալվում է ՀՀ կառավարության պարտքի՝ ՀՆԱ-ում 2.7 տոկոսային կետով աճ, որը որոշակիորեն մեղմվել է նաև դրամի արժևորման շնորհիվ: Արդյունքում՝ գնահատվում է, որ **ՀՀ կառավարության պարտքը ՀՆԱ-ում կձևավորվի պարտքի բեռի նվազեցման 2025-2027թթ. ծրագրով նախատեսված ցուցանիշի շրջանակներում՝ բարձր գտնվելով հարկաբյուջետային կանոններով սահմանված 50 տոկոս մակարդակից: Վերջինս հարկաբյուջետային համարժեք գործողությունների բացակայության պարագայում որշակի ռիսկեր կարող է պարունակել միջնաժամկետ հորիզոնում պարտքի և հարկաբյուջետային կայունության ապահովման տեսանկյունից:**

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ

2026 թվականի բյուջեի ծրագրում նախանշված հարկաբյուջետային քաղաքականությունն արտացոլում է Հայաստանի մրցունակության աճի ապահովման, տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքներում, ինչպես նաև մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդման և ՀՆԱ ներուժի աճի ապահովումը: Ընդ որում, նախորդ տարիների տնտեսական բարձր աճի կարճաժամկետ գործոնների ազդեցությունների աստիճանական չեզոքացման հետ մեկտեղ, ներուժային մակարդակին մոտ, կայուն տնտեսական աճի ապահովումը էապես կախված կլինի Կառավարության նպատակադրած արտադրողականության բարձրացման, արտահանման խթանման և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունների արդյունքներից: Այս պարագայում, հաշվի առնելով հարկաբյուջետային կոնսոլիդացիա իրականացնելու, ինչպես նաև կապիտալ ծախսերի՝ պատմական միջին մակարդակներից բարձր մակարդակում ապահովելու ՀՀ կառավարության նպատակադրումը, էապես կարևորվում է կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացումը: Նշվածը շեշտադրվում է հատկապես տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդմանն ուղղված ծրագրերի ամբողջական և արդյունավետ իրականացման տեսանկյունից: Արդյունքում՝ **2026 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունն առաջնորդվելու է 5.4% տնտեսական աճի ապահովման նպատակադրմամբ**՝ շեշտադրելով հարկաբյուջետային կոնսոլիդացիայի և պարտքի կայունության, ինչպես նաև տնտեսական ներուժի վերջին տարիներին ձևավորված բարձր մակարդակի պահպանումն ու աճին նպաստումը:

Այդուհանդերձ, ստեղծված աշխարհաքաղաքական և տնտեսական անորոշությունների պայմաններում, առկա են էական արտաքին և ներքին ռիսկեր՝ տնտեսական ներուժը պայմանավորող գործոնների կայունության և տնտեսական հեռանկարի հնարավոր սցենարների տեսանկյունից: Այս առումով, հարկ է նշել, որ

2026 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրում դիտարկվել են դրա հիմքում դրված հիմնական ենթադրություններից և կանխատեսումներից հնարավոր շեղումների հետ կապված ռիսկերն ու անորոշությունները, իրականացվել են սցենարային վերլուծություններ, գնահատվել են դրանց ի հայտ գալու պարագայում բյուջեի հոսքերի և հարկաբյուջետային քաղաքականության շրջանակի ճշգրտման հնարավոր ուղղությունները: Սա կարևոր նախապայման է հարկաբյուջետային քաղաքականության ռիսկերի կառավարման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, **հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական աճի ռիսկերն ու անորոշությունները մեծ են, ռիսկերի արդյունավետ կառավարման տեսանկյունից կարևորվում է պահուստային ֆոնդի օգտագործման խիստ սահմանափակումների առկայությունը՝ ուղղված բացառապես մակրոտնտեսական ռիսկերից բխող հնարավոր լրացուցիչ ֆինանսական պահանջների բավարարմանը:**

Նախանշված տնտեսական աճի, օրենսդրական փոփոխությունների արդյունքում հարկման բազայի ընդլայնման, հարկային վարչարարության կատարելագործման ներքո իրականացվող հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում՝ **2026 թվականի համար ծրագրվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության՝ ընթացիկ տարվա սպասվող ցուցանիշի համեմատ ևս 0.4 տոկոսային կետով աճ**, որի արդյունքում հարկերը կկազմեն ՀՆԱ-ի 24.9 տոկոսը: Ընդ որում, վերջինս արտացոլում է որոշակի լավատեսական մոտեցում և նշանակում է հարկեր/ՀՆԱ-ի գերազանցում 2026-28թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված ցուցանիշներին: Արդյունքում՝ գնահատվում է, որ **2026 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտները համախառն պահանջարկի վրա կունենան փոքր զսպող ազդեցություն**: Կարևոր է նշել, որ տնտեսական աճի հեռանկարի հետ կապված ռիսկերի ու անորոշությունների համատեքստում, **առանցքային է 2026 թվականին հարկերի հավաքագրման բարեփոխումների շարունակականության և արդյունավետության ապահովումը՝ միաժամանակ շեշտադրելով կայուն նախադրյալների ձևավորումը՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար:**

2026 թվականի պետական ծախսային քաղաքականությունը, շեշտադրելով մի կողմից՝ անհրաժեշտ կոնսոլիդացիայի իրականացումը, իսկ մյուս կողմից՝ մարդկային կապիտալում ներդրման աճի և տնտեսության ներուժին խթանելու նպատակադրումներ, շարունակելու է պետական ծախսերի՝ ՀՆԱ-ում կրճատման թիրախավորումը: Նշենք, որ 2026 թվականին և միջնաժամկետ հատվածում, թեև **կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նախորդ տարվա համեմատ նվազում է,** սակայն այն **կայունանում է պատմական մակարդակներից բարձր՝ պայմանավորված հատկապես տնտեսական ենթակառուցվածքների ամրապնդման նպատակադրմամբ**: Արդյունքում՝ 2025 թվականի սպասվող ցուցանիշների համեմատ կապիտալ ծախսերի 0.7 և ընթացիկ ծախսերի 0.1 տոկոսային կետ նվազումների շնորհիվ **պետական ծախսերը ՀՆԱ-ում կնվազեն 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 30.4%՝ ամբողջական պահանջարկի վրա ունենալով զսպող ազդեցություն:** Ընդ որում, միջնաժամկետ ծրագրերի համեմատությամբ, բյուջեի նախագծում նախատեսված է ՀՆԱ-ում պետական ծախսերի

ավելի բարձր մակարդակ՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով, իսկ կապիտալ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը համահունչ է 2026-28թթ. ՄԺԾԾ-ին՝ կազմելով 5.9 տոկոս: Այդուհանդերձ, կապիտալ ծախսերի մասով հիմնական շեշտադրումն ուղղված է տնտեսական ենթակառուցվածքների ամրապնդմանը, որը կխթանի տնտեսության ներուժը, արտադրողականությունը՝ հիմքեր ստեղծելով որդեգրած տնտեսական զարգացման ծրագրերի իրագործման համար: Հարկ է նշել նաև, որ ծախսային ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով 2026 թվականից ՀՀ կառավարության կողմից բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթացի ներդրումը կարևոր նշանակություն կունենա հարկաբյուջետային քաղաքականության նպատակների իրագործման տեսանկյունից:

Այսպիսով՝ հարկաբյուջետային կոնսոլիդացիա ապահովելու նպատակադրման ներքո՝ ՀՆԱ-ում հարկերի նախանշված աճի և ծախսերի կրճատման արդյունքում, **բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության գծով ծրագրվել է 1 տոկոսային կետով նվազում՝ ապահովելով ՀՆԱ-ում 4.5% մակարդակ:** Արդյունքում՝ **հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա կունենա թույլ զսպող ազդեցություն՝ ընդ որում, թե՛ եկամուտների, թե՛ ծախսերի զսպող ազդակների ձևավորմամբ:** Հատկանշական է, որ քաղաքականության նման ուղղության որդեգրումն ուղղված է տնտեսությունում ձևավորվող որոշակի ավելցուկային պահանջարկի զսպմանը և հակապարբերաշրջանային դիրքի ապահովմանը: Միաժամանակ, հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականության ներքո՝ ծախսերի կառուցվածքի նպատակադրված բարելավումը և արդյունավետության բարձրացումը դրական ազդեցություն կունենա տնտեսական ներուժի վրա՝ չեզոքացնելով պակասուրդի ճշգրտումից բխող ազդեցությունը: Այս համատեքստում, հաշվի առնելով միջնաժամկետում հարկաբյուջետային կոնսոլիդացիայի նպատակադրումը, **առանցքային նշանակություն ունի պետական ծախսային քաղաքականության թիրախների ապահովումը և հատկապես պետական կապիտալ ծախսերի նախատեսված բարձր կշիռների ապահովումը, ինչը կայուն նախապայման կստեղծի երկարաժամկետ տնտեսական ներուժի աճի և դրա շնորհիվ՝ երկարաժամկետ հեռանկարում պետական պարտքի կայունության ապահովման համար:**

2025 թվականին սպասվող պարտք/ՀՆԱ ցուցանիշի՝ ծրագրվածից համեմատաբար ցածր մակարդակի նկատմամբ 2026 թվականին կառավարության **պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կաճի 2.8 տոկոսային կետով և կկազմի ՀՆԱ-ի 53.5%-ը:** Վերջինս կձևավորվի միջնաժամկետում նախատեսվածից ավելի ցածր և հարկաբյուջետային կանոններով սահմանված շեմային 50%-ից բարձր մակարդակում: ՀՀ կառավարության պարտքի ծրագրված ավելացման և վերռնշյալ մակրոտնտեսական ռիսկերի համատեքստում, կարևորվում է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը՝ երաշխիքներ ստեղծելով երկարաժամկետում հարկաբյուջետային կայունության ապահովման համար: Հատկանաշական է, որ այս համատեքստում Կառավարության կողմից միջնաժամկետ հատվածում բյուջեի պակասուրդի մակարդակի նվազեցման և հարկաբյուջետային կոնսոլիդացիայի նպատակադրման արդյունքում պարտքի աճի

տեմպը կնվազի, և ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկայունանա 54.6%-ի շրջանակներում: Ընդ որում, 2026 թվականին պետական բյուջեի պակասուրդի և հատկապես կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար շարունակվելու է արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավումը, ինչպես նաև ազգային արժույթով պարտքի և ներքին պարտքի աստիճանական ավելացումը: Նշենք, որ պարտքի կայունության ապահովման՝ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության տեսանկյունից կարևորվում է պետական ծախսերի իրականացումը՝ ի հաշիվ սեփական միջոցների, ինչպես նաև բյուջեի պակասուրդի ֆինանսավորման իրականացումը՝ պարտքի կառավարման համարժեք ու արդյունավետ ռազմավարությանը համապատասխան:

**Հարկ է ընդգծել, որ մակրոտնտեսական ու գների կայունության ապահովումն ու ամրապնդումը 2026 թվականին և միջնաժամկետ հորիզոնում կշարունակեն մնալ հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականությունների առաջնային թիրախում, և ՀՀ կենտրոնական բանկը կշարունակի հետևողական քաղաքականությունը գնաճի ու գնաճային սպասումների կարգավորման ուղղությամբ:**

*Ամփոփելով՝ գնահատվում է, որ 2026 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով նախանշված հարկաբյուջետային քաղաքականությունը մի կողմից՝ ձևավորվող ավելցուկային պահանջարկի պայմաններում կունենա հակապարբերաշրջանային ազդեցություն, մյուս կողմից՝ կստեղծի անհրաժեշտ նախադրյալներ միջնաժամկետ հատվածում արդյունավետ կոնսոլիդացիայի և հարկաբյուջետային կայունության ապահովման տեսանկյունից: Այդուհանդերձ, տնտեսական ներուժի խթանման տեսանկյունից, կարևորվում է Կառավարության հետևողականությունը պետական ներդրումների աճի և ընթացիկ ծախսերի աճի տեմպի նվազեցման նպատակադրումներում: Միևնույն ժամանակ, հարկերի հավաքագրման արդյունավետության բարձրացմանն ուղղված հարկային բարեփոխումներն անհրաժեշտ նախապայման կստեղծեն երկարաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականության ճկունության ապահովման համար:*

*Հարկ է ընդգծել նաև, որ աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական անորոշությունների պայմաններում ռիսկերի բացասական ազդեցությունները չեզոքացնելու նպատակով առաջնային նշանակություն ունի ռիսկերի հետևողական մշտադիտարկումը, դրանց կառավարման կարողությունների ու մոտեցումների ձևավորումը, ինչը կարող է առանցքային լինել կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում մակրոտնտեսական կայունության ու հարկաբյուջետային ճկունության, իսկ երկարաժամկետ հորիզոնում՝ նաև պարտքի կայունության ապահովման համար:*